ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«04» 02 2022 թ.
№ 7/018/2-154

«ԲԵԼՈՎՈ» ՍՊԸ (ՀՎՀՀ 04215389) տնօրեն
Վ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Փիրումյաններ 4/3
էլ. հասցե՝ hovsep_84@mail.ru, info@eltrmder.am

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԲԵԼՈՎՈ» ՍՊ ընկերության միջև 16.04.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-7/8-7 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2021 թվականի 2-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 10000 կգ Տնտեսական օճառ, որից չի մատակարարել 413 կգ, 3-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 10000 կգ Տնտեսական օճառ, որը չի մատակարարել և 4-րդ եռամսյակում, ոչ ուշ քան 2021 թվականի հոկտեմբերի 31-ը պետք է մատակարարեր 10000 կգ Տնտեսական օճառ, որը չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. փետրվարի 3-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը վերոնշյալ ապրանքի խմբաքանակների մասով:

Տեղեկացնում եմ, որ «ԲԵԼՈՎՈ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 385846 ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և 81000 ՀՀ դրամ՝ որպես տուգանք, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 1620000 ՀՀ դրամ՝ որպես տուժանք (պայմանագրի կատարման ապահովում) և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին ենթակա է գանձման 2430000 ՀՀ դրամ որակավորման ապահովում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am